

ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ



«ԱՁԴԱԿ»Ի

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

Ա. ՏԱՐԻ

ԹԻՒ 2

ՄԱՅԻՍ 2002

bezdig_mezdig@hotmail.com

ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՐԵՒ

Սիրելի՛ երեխաներ,

«ՊԿՏԻԿ-ՄԿՏԻԿ»-ի առաջին թիվն գտած ընդունելությունն էլ դրական արձագանգ էն խանդավառ՝ նոյն թափով կը շարունակենք անոր հրատարակությունը:

Ինչպէս կը յուսայինք, այս թերթին պատրաստութեան մէջ ձեր ներդրումը օրէ օր կ'աւելնայ: Ձեզմէ կը շարունակենք ստանալ ոչ միայն քաջալերական նամակներ, հարցումներ, այլ նաեւ ժամանցի խաղեր, գրութիւններ եւ գծագրութիւններ: Աւելցած է նաեւ թերթին հրատարակութեան մասնակցող դպրոցներուն թիւը:

Ճնորհակալութիւն ձեր բոլորին:

«ՊՁՏԻԿ - ՄՁՏԻԿ»

ՍԻՐԵԼԻ ԻՆՅԱՍՏԱՆ...

Ժողովուրդները, մասնատրաքար անոնք, որոնք խաղաղասէր ու մշակութասէր են, ընդհանրապէս չեն սիրեր պատերազմները: Սակայն կրնայ պատահիլ, որ նոյնիսկ պատերազմ չսիրողը կռիւի դաշտ կ'երթայ, եթէ թշնամին բանակով յարձակի իր սիրելի հայրենիքին վրայ:

Այսպէս պատահեցաւ 28 Մայիս 1918ին հայաստանի մէջ: Խաղաղասէր հայ ժողովուրդը երբ տեսաւ, թէ թուրքերը մեծ բանակով կը յարձակին հայաստանի վրայ եւ կ'ուզեն գրաւել մեր հայրենիքը, մեծ ու փոքր, կին ու այր միանալով, դէմ կեցան թուրքերուն: Անոնք երեք շրջաններու՝ Ղարաբա-



լիստի (այսօրուան Վանաձորը), Բաշ Ապարանի (այսօրուան Ապարանը) եւ Սարդարապատի մէջ պատերազմ մղեցին: Իրենց սիրելի հայրենիքը պատելու համար թուրքերու յարձակումներէն, ամբողջ սրտով կռուեցան եւ հնա-

վանդեցան իրենց դեկավարին՝ Արամ Մանուկեանին: Իրենց յաղթական դուրս եկան երեք կռիւներէն եւ թուրքերը վտարեցին հայաստանէն: 28 Մայիս 1918ին հայերը յայտարարեցին հայաստանի անկախութիւնը: Իր եռագոյն դրոշակը՝ հորիզոնական կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն գոյներով: Ամէն հայ կը ծանչնայ հայաստանի պինանշանը:

Երեւան քաղաքը դարձաւ հայաստանի մայրաքաղաքը, ուր հիմնուեցաւ Երեւանի համալսարանը:

Յեղասպանութենէն երեք տարի ետք հայերը կրցան փրկել իրենց սիրելի հայրենիքը՝ հայաստանը:

...ԵՒ ՍԻՐԵԼԻ ՄԱՅՐ

Մայիս ամսուան ընթացքին հայաստան յայտարարեց իր անկախութիւնը: Գեղեցիկ է Մայիս ամիսը, որուն ընթացքին մենք միայն հայրենիքի անկախութեան օրը չենք նշեր, այլ մեծ հաճոյքով կը տօնենք նաեւ մեր ընտանիքներուն սիւնը կազմող մայրերուն տօնը:

Ինչպէս որ մենք մեր մայրերուն համար Աստուծոյ կողմէ ուղարկուած գեղեցիկ նուէրներ ենք, նոյնպէս ալ մեր մայրերը մեզի համար

նուէրներ են: Անոնց կողքին մենք աւելի հանգիստ ու ապահով կը պահանք: Անոնց ծախտն ու քաջալերական խօսքերը կը պօրայնեն եւ յառաջդիմութեան կ'առաջնորդեն մեզ:

Անոնց փոխանցած խրատներով եւ մրմնջացած աղօթքներով հեռու կը մնանք փորձանքներէ եւ մեծնալէ ետք կը դառնանք ընկերասէր, մարդասէր, ուսումնասէր հայ մարդեր:



Մայիս ամսուան ընթացքին չմոռնանք համբոյրով մը կամ ճաղիկով մը մեր սէրն ու երախտագիտութիւնը յայտնելու աշխարհի մէջ մեր մէկ հատիկ մայրերուն:

Ձեր գրութիւնները կամ նամակները կրնաք ուղարկել՝ bezdig_mezdig@hotmail.com կամ յանձնել՝ «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»-ի խմբագրութեան, «ԱՁԴԱԿ» «Ճաղկոյեան» կեդրոն



ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈՒ ԱՄԻՍ ՄՐ

«Պ Կ Մ Ի Կ -
Մ Կ Մ Ի Կ»-ը յաջորդա-
կան երկու տեսակ-
յութիւններ ունեցաւ
«Կարկաչ» մանկա-
պատանեկան երգչա-
խումբին եւ անոր
խմբավարին հետ:



Մեր տեսակցութեան
ամփոփումը կը փոխանցենք
յառաջիկայ տողերուն մէջ:
«Կարկաչ» երգչախումբի այս
տարուան ելոյթը տեղի պիտի
ունենայ Ուրբաթ 24, Ուրբաթ
31 Մայիս, Ճարթաթ 1 եւ
Կիրակի, 2 Յունիս 2002ին:

Այս տարի համապայիւնի
«Կարկաչ» երգչախումբը 5րդ
տարին է, որ կ'երգէ: Այս հինգ
տարիներու ընթացքին «Կար-
կաչ»-ը երգած է մօտաւորա-
պէս 100- երգեր, որոնցմէ
80ը նոր են՝ գրուած հայրենի
արուեստագէտներու կողմէ յա-
տուկ «Կարկաչ» եւ «Վարան-
դա» երգչախումբերու համար:

«Կարկաչ» երգչախումբը
ունի տարիքային երեք բա-
ժանմունքներ, որոնք կը
նպաստեն երաժշտական
որակաւոր կրթութիւնն ձեռք
բերելու աշխատանքին:

Առաջին խմբակը 6-9 տա-

րեկան փոքրիկներն են, երկ-
րորդ խմբակը 10-14 տարե-
կաններն են, իսկ երրորդ
խմբակը 14-18 տարեկան
երէց պատանիներու խմբակն է:

Խմբավար պարոն Զաքար
հաստատեց, որ «Կարկաչ»
հիմնական դեր ունի երգար-
ւեստի մարզէն ներս, որով-
հետեւ երգչախումբի փորձերու
ընթացքին ձայնամարդութիւն
կը կատարուի եւ երեխային
կամ պատանիին երաժշտա-
կան ճաշակը կը յղկուի: Նոյն
պատանին երբ 18 տարեկան
ըլլայ եւ ուլէ մասնագիտական
ձայնամարդումի հետեւիլ ար-
դէն որոշ պատրաստ ենթահող
կ'ունենայ:

Պրն. Զաքար իր խօսքի
աւարտին շնորհաւորեց
«Պ Կ Մ Ի Կ»-ի ուշացած
ճնունդը եւ բարի երթ մաղթեց
անոր: □

«Պ Կ Մ Ի Կ -
Մ Կ Մ Ի Կ» ժա-
մադրուած էր նաեւ համապա-
յիւնի Պարի Միաւորին հետ,
որովհետեւ այս ամսուան հա-
ճելի անակնկալներէն են նաեւ
պարախումբին ելոյթները,
որոնք տեղի պիտի ունենան
17-26 Մայիս 2002, «Մո-
նօ» թատերասրահին մէջ:

Պարախումբին փորձերը
դիտելէ ետք, «Պ Կ Մ Ի Կ -
Մ Կ Մ Ի Կ» դժուարացաւ հարցում
հարցնել, որովհետեւ պարերը
դիտելով բոլոր հարցումներուն
պատասխանը կը ստանաք եւ
...անպայման կ'ուլէք նորէն

դիտել, շատ դիտել...

Սակայն «Պ Կ Մ Ի Կ -
Մ Կ Մ Ի Կ» հաւաքեց ինքզինք եւ
հարցումներ ուղղեց պարողնե-
րուն եւ պարուսոյց պարոն
Ֆելիքսին:

Պարոն Ֆելիքսի հետ մեր
խօսակցութեան ընթացքին
յստակացաւ, որ միաւորը կը
բաղկանայ մօտաւորապէս 85
երեխաներէ, պատանիներէ եւ
երիտասարդներէ, որոնց տա-
րիքի սահմանները կը սկսին
Յրդ դասարանէն:

Երբ «Պ Կ Մ Ի Կ -
Մ Կ Մ Ի Կ» հարցուց պարոն Ֆելիքսին, թէ

ՊՁՏԻԿ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՆԵՐ

«Կարկաչ»ի երգիչները կ'ըսեն.

Սարին Սարաֆեան, Սարին Ատուրեան եւ Թալին Մարտի-
րոսեան.- Կը սիրենք երգել եւ ուրախ կը վզանք, որովհետեւ
կ'երգենք ընկերներով: Այդպիսով բարձր կը պահենք հայ
երգը:

Յարութ Տ. Յուսիկեան.- Կը սիրեմ երգել եւ կը փափա-
քիմ ապագային եւս երգել, բայց ամէն բանէ առաջ անհրա-
ժեշտ է, որ ուսումս շարունակեմ:

Նաթաշա Պախչեճեան, Վանայ Խտրոյարեան եւ Քրիստին
Մարգարեան.- Ճատ հաճելի է պրն. Զաքարին հետ երգել,
որովհետեւ ան շատ կը զուարճացնէ փորձերու ժամանակ
շատ կը համբերէ, սակայն երբ աշխատանքի ժամանակը
գայ՝ կը լրջանայ:

Պարը իբրեւ ասպարէզ մը ընտրելու մասին...

Վարանդ.- Ես շատ կը սիրեմ պարել, սակայն ներկայիս
կը մտածեմ պարել իբրեւ ժամանց:

Իսկ Լիանա բոլորին կողմէ շնորհակալութիւն յայտնեց
պարոն Ֆելիքսին, որուն դերը այս աշխատանքներուն մէջ
շատ մեծ է:

ԻՐՍԿ ԹԱՄՈՐՈՆՆԸ

Խաժակ, Սարօ եւ Ռիթա.-Կը մտածենք ընտրել դերասա-
նական ասպարէզը: Խաժակ Աբելեան աւելցուց, որ իր ճնող-
ները համոզուած են եւ արգելք չեն հանդիսանար: Բիմնա-
կան դժուարութիւնը կը մնայ մասնագիտանալու պարագա-
յին Լիբանանի սահմանափակ կարելիութիւնները: Այս իմաս-
տով կարելիութիւն է հայաստանը, որուն ընտրութեան պա-
րագային պրն. Վիգէն անպայման օգտակար կ'ըլլայ:

«ՊՁՏԻԿ - ՄՁՏԻԿ»



ինչպէս պարադրումը կը կա-
տարէ.

Պարոն Ֆելիքս ժպտեցաւ եւ
ըսաւ, թէ ինք ալ չգիտեր: Սա-
կայն ան աւելցուց, որ երբ


երաժշտութիւն
լսէ, արդէն միա-
ժամանակ կը
սկսի պարե-
րուն շարժում-
ները տեսնել:

Այս տարի
համապայիւնի
պարախումբը
կը տօնէ իր
45 ամեակը:

Ելոյթներուն
գլխաւոր թեման պարախում-
բին 45 ամեակն է:



ԺԱՔ ԾԻՐԱՔ ԱՊԱԲՈՎԵՑ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱԾՐՋԱՆՆԸ



Մայիս 5ին Ֆրանսայի նախագահ Ժաք Ծիրաք ջախջախիչ մեծամասնութեամբ երկրորդ նստաշրջան մը ապահովեց:

Ծիրաք յաջորդ օրն իսկ վարչապետ նշանակեց ժան Փիեռ Բաֆարէնը, որ յառաջացուց 21 հոգինոց կառավարութիւն մը: Տեղին է յիշել, որ հայազգի Փաթրիք Տէվէճեան նշանակուած է յատուկ յանձնարարութիւններով նախարար:

ՆԱԽԱԳԱՌ ԲՈՊԵՐՈՅ ՔՈՉԱՐԵԱՆԻ ՊՐԱԶԻԼ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԸ

հայաստանի նախագահ Բոպէրթ Քոչարեան Մայիս 6ի երեկոյեան հասաւ Պրազիլ: Սան Փաուլոյի հայ Առաքելական եկեղեցւոյ մէջ ան հանդիպում ունեցաւ պրազիլահայ համայնքին հետ: Իր խօսքին մէջ նախագահ Քոչարեան նշեց, թէ Սփիւռքը պիտի մնայ հայաստանի արտաքին քաղաքականութեան ուշադրութեան կեդրոնը:



ԱԾՈՒԱՐԻ ԵՐԵՒԱՆԵՐՈՒՆ ԳԱՄԱԺՈՂՈՎՐ

Աշխարհի մանուկներուն դիմագրաւած դժուարութիւններուն լուծում գտնելու համար ՄԱԿը 8-10 Մայիսին Նիւ Եորքի մէջ կազմակերպեց Մանուկներու Յատուկ համաժողով մը, որուն մասնակցեցան մեծ թիւով երկիրներ եւ կազմակերպութիւններ:

համաժողովին իրենց մասնակցութիւնը բերին Լիբանանը եւ հայաստանը ներկայացնող պատուիրակութիւններ:

հետաքրքրական է, որ այս համաժողովին մասնակցեցան ոչ միայն չափահասներ, այլ նաեւ՝ երեխաներ:



2002Ի ՄՈՆՏԻԱԼ ՌԿ Է ԵՈՒՆՐԻ ԾՈՐՔԱՅԷՓ

Ֆրանսայի ֆութպոլի ազգային խումբին կարեւորագոյն մարզիկներէն մէկն է հայազգի ետրի ճորքայէֆ, որ իր մասնակցութիւնը պիտի բերէ Ճափոնի եւ հարաւային Բորեայի մէջ տեղի ունենալիք 2002ի Մոնտիալին:



Ծորքայէֆ ֆութպոլիստի իր ասպարէզը սկսած է 1984ին՝ մաս կազմելով ֆրանսական կրենոպլ խումբին (Ք. դասակարգ): Ան ծնած է Լիոնի մէջ (Ֆրանսա), 9 Մարտ 1968ին: Ապա ան յաջորդաբար մաս կազմած է Սթրազպուրկի, Մոնաքոյի, Փարիզ Սէն Ժերմէնի, Ինթեր Միլանի, Քայզերսլաութըրնի եւ վերջապէս, Պոլթընի, որուն շապիկը կը շարունակէ կրել այսօր: 1993ին, առաջին անգամ ըլլալով ան կրեց Ֆրանսայի ֆութպոլի ազգային խումբին շապիկը՝ Իսրայէլի դէմ տեղի ունեցած մրցումին (1994ի Մոնտիալի

կոլ նշանակելով՝ ան դարձաւ հիմնական մարզիկ մը, մեծապէս նպաստելով իր կազմին արձանագրած յաղթանակներուն:

1998ի Մոնտիալին աշխարհի ախոյեան հանդիսանալով, իսկ եւրո-2000ի ֆութպոլի մրցաշարքին եւրոպայի ախոյեանութեան տիտղոսին տիրանալով՝ ճորքայէֆ, իր կողքին ունենալով Զինետին Զիտանը, յաջողեցաւ բաւական մեծան հոսեցնել իր մասին:

Բոլոր աշխարհներով ետրի ճորքայէֆ միշտ ալ պաշտպան եղած է իր ազգին եւ երբե՛ք չէ ուրապած իր հայութիւնը:

Մոնտիալին ազդանշանը կը տրուի յառաջիկայ Մայիս 31ին, երբ Ֆրանսա կը կատարէ բացման մրցումը:

Ֆրանսայի յաղթանակով վստահաբար պիտի պարճենայ ֆութպոլի համակիր ոեւէ հայ: Մեր սրտերը աւելիով պիտի

տրոփեն, երբ ամէն անգամ ետրի ճորքայէֆ ցնցէ մրցակից կազմերուն բերդը:

ՄՐՑԱՆՔ

1. Ռի խումբը պիտի շահի 2002ի Մոնտիալի բաժակը:

2. Որո՞ւք պիտի ըլլան կիսաւարտական հանգրուանի հասնող չորս խումբերը:

3. Ռվ պիտի հանդիսանայ Մոնտիալի կոլտորրըրը:

Մրցանքի կտրօնները պէտք է հասած ըլլան «Ակդակ»ի խմբագրատուն ամենէն ուշը մինչեւ 30 Մայիս 2002:



«ՄԵՍՐՈՊ ՄԱՅՏՈՑ»
ԵՐԳՉԱԽՈՒՄՔԸ՝
ԼԻՔԱՆԱՆԻ ՄԵՔ



Բամապգայինի «Կարկաչ» մանկապատանեկան երգչախումբին հրաւերով հալէպի «Մեսրոպ Մաշտոց» մանկապատանեկան երգչախումբը Ծաբաթ, 27 Ապրիլին, «Յովհաննէս Պողոսեան» թատերասրահին մէջ ունեցաւ երգահանդէս մը: Գայիանէ Սիմոնեան-Տէրեանի խմբավարութեամբ եւ Սեւան Ներսէսեանի դաշնակի ընկերակցութեամբ, «Մեսրոպ Մաշտոց»-ի շուրջ 80 փոքրիկ երգիչները երգեցին մանկապատանեկան եւ ազգային երգեր: Իսկ համերգին վերջին երգը՝ «Երազ իմ՝ երկիր հայրենի»ն, միասնաբար մեկնաբանեցին «Մեսրոպ Մաշտոց» եւ «Կարկաչ» երգչախումբերը: Երգահանդէսի աւարտին «Կարկաչ»-ի խմբավար Զաբար Քէշիշեան «Կարկաչ»-ի կողմէ յուշանուէր մը յանձնեց «Մեսրոպ Մաշտոց» երգչախումբին, որ, իր կարգին, «Կարկաչ»ը հրաւիրեց հալէպ՝ երգահանդէս տալու համար:

ԺԱԳ Ս. ՅԱԿՈՐԵԱՆ՝ ԲԱՆԻ ՄԸ ԺԱՄ
ԲԱՅ ԱԾԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԲԵՏ

«Առիւծ էք, մի՛ կորսնցնէք ձեր ինքնութիւնը, որովհետեւ առիւծները առիւծ կը մնան ու չեն կրնար ոչխարի մը պէս ապրիլ»...

Այս պատգամով 18 Ապրիլ 2002ին, ժագ Ս. Յակոբեան բարձրացաւ Սիրան Մանուկեան սրահին բեմը, ուր հայ աշակերտութեան կողմէ տօնուցաւ անոր ճննդեան 85ամեակը եւ գրական գործունէութեան 65ամեակը: Աշակերտներուն ներկայութիւնը ու բանաստեղծին հրամցուցած անոնց հայկական գեղարուեստական կտորները ժագ Ս. Յակոբեանի երեսին վրայ գծեցին մեծ ժպիտ մը: Ալեկարդ բանաստեղծը, հակառակ 65 տարիներու իր գրական գործունէութեան, ինքզինք անկարող պգայ գտնելու այն յարմար բառերը, բացայայտելու իր անսահման ուրախութիւնը՝ հայկական այդ ջերմ մթնոլորտին մէջ: Բայց անոր վառվռուն աչքերը բաւարար էին ի յայտ բերելու այդ բոլորը: Ուրախ էր. կարծես գտած ըլլար իր ընտանիքը:

Տպաւորիչ դէմք մըն ունէր, իր խօսքերով, շարժումներով ու դիմագիծով:

Ժագ Ս. Յակոբեան, իր խօսքին ընթացքին, արտասանեց իր բանաստեղծութիւններէն,



որոնցմէ ամէնէն յատկանշականն ու ազդուն իր անկեղծ ու հպարտ «Մենք»ն էր:


Վստահ ենք, որ ժագ Ս. Յակոբեան այս պահը պիտի յիշէ իր ապրած գեղեցիկ վայրկեաններով ու վգայումներով:

Նոյնն ալ մենք ... Զինք կը յիշենք իբրեւ հայր բանաստեղծ մը եւ կը խոստանանք մնալ «Առիւծ», չկորսնցնել մեր նկարագիրը՝ միշտ լսելով ու ուղղուելով դէպի մեր հայրենիքին ճայնը՝ եկած բարձր լեռներէն:

ԿԱՐՈՆԷ ԿԻՒՄԻՈՇԵԱՆ
Ազգային եղիշէ Մանուկեան
Երկրորդական վարժարան

ՄԻՋԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐԻ ՓԱՌԱՏՕՆ

Կ ա Վ մ ա -
Կ ե Ր պ ու -
թեամբ հա-
մապգայինի
Լ ի բ ա ն ա ն ի
Պ ա Ր ա Ր ւ Ե ս -
տի Մ ի ա -
ւ որին, Ծ ա -
բ ա թ, 4 Մ ա -
յիս 2002
կ է ս օ Ր է Ե տ ք
ժամը 4:00ին, Պ. Բամուտի
«Յ. Տէր Մելքոնեան»



պարերը:
Կարելի չէ արդեօք նոյնպէս կազմակերպել երգի եւ թատրոնի փառատօներ...:

Վարձքը կատար եւ յաջողութիւն կազմակերպիչ մարմինն:

«ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»

ՏՈՒՈՒ «ՊԱՐՊԻ»Ն



85 տարեկան Ռիւթ Բանտլէր մահացաւ Լոս Անձելըսի մէջ: Ան հեղինակն էր «Պարպի» նշանաւոր պուպրիկին: Ինչպէս նաեւ հիմնադիրը «Մաթիր» խաղալիքներու մեծ ընկերութեան:

Ռիւթ Բանտլէր 1959ին հնարեց «Պարպի»ն, որ համաշխարհային համբաւ ունեցաւ:

Կ'ըսուի, թէ աւելի քան մէկ միլիառ «Պարպի» պուպրիկներ ճախուած են աշխարհի տարածքին:

սրահին մէջ տեղի ունեցաւ միջդպրոցական պարի փառատօն մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին հայկական 12 վարժարաններ:


Աշակերտները հանդէս եկան հայկական վանազան պարերով, որոնք խանդավառեցին հանդիսատեսները:

Կը խնդրուի կազմակերպիչ մարմինէն, որ ստեղծէ այլ առիթ մը եւս, որպէսզի հայկական վարժարաններու աշակերտները կարենան վայելել իրենց դասընկերներուն

ԲՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է



Գեղագրութեան եւ գունատրուամի գրքոյկ պահանջեցէք գրատուններէն



Կրիաները ակռաներ չունին, սակայն ունին շատ պորաւոր լինտեր: Կրիաներուն պատեանը շատ պգայուն է, ան կը պգայ ամէնէն թեթեւ ծնշումն իսկ:

Անոր երկայնքը կրնայ քանի մը սանթիմետրէն քանի մը մետրի մէջ տարուերիլ: Ծատ ժամանակ առաջ կրիայի ընտանիքի 200 տեսակ եղած է, ներկայիս 12 ընտանիք կայ, իւրաքանչիւր ընտանիք՝ իր ենթաբաժանումներով:

Կրիան լաւ տեսողութիւն ունի, ինչպէս նաեւ՝ որոշ հոտառութիւն եւ լսողութիւն: Երբեմն կրիաներ կան, որոնք կը հետեւին իրենց տիրոջ եւ կը սիրեն, որ մարդիկ պաղին իրենցմով, կան կրիաներ ալ, որոնք ժամերով կը փորձեն շատ նեղ բացուածքէ դուրս ելլել:

Արական եւ իգական կրիաներու միջեւ հիմնական տարբերութիւնը պոչն է, որ երկար կ'ըլլայ արականի պարագային:

Փոքրերը շատ կը սիրեն կրիաները եւ շատեր կանոնք կը պահեն իրենց տուններուն մէջ, սակայն պոչը պէտք է ըլլալ, որովհետեւ կրիաները երբեմն պատճառ կ'ըլլան, որ որոշ մանրէներ փոխանցուին: Ուրեմն միշտ պէտք է լուսալիլ, երբ կրիային հետ կը խաղաք:

Կրիան ողնաւոր սողուն մըն է. միակ սողունը, որ պաշտպանուած է պատեանով: Ընդհանրապէս ան կ'ապրի տաք շրջաններու մէջ: Կրիան կը սիրէ ցերեկը, արեւուն ճառագայթները եւ տաք եղանակը: Ան կը քնանայ, երբ ցուրտ ձմեռ է: Կրիան երկակենցաղ է, կ'ապրի թէ՛ ջուրի մէջ եւ թէ՛ ցամաքի վրայ:

Պարնան կը սկսի կրիաներու սիրաբանութեան շրջանը, որուն իբրեւ արդիւնք՝ «մամա» կրիան հակիրճներ կ'աճէ խոնաւ փոսի մը մէջ եւ պոչուլութեամբ հողով կը ճաճկէ վանոնք: հակիրճներուն մէջ ձագուկ կրիաները կը կազմուին արեւուն տաքութեան օգնութեամբ: Կրիան կրնայ 1-200 հակիրճ աճել, այդ մէկը կախում ունի իր տեսակէն:

ՓԵՆԵԼՈՓԷ ՔՐՈՒՋ ԵՒ ՓՈՓ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ



Սպանացի դերասանուհի Փենելոփէ Քրուլ որոշած է մուտք գործել փոփ երաժշտութենէն ներս: Ըստ շշուկներու նախածեռնութեան, հասոյթը պիտի յատկացուի «Սապերա» բարեսիրական հիմնադրամին: Յիշենք, որ «Սապերա» հիմնադրամը կ'օժանդակէ կալկաթայի մէջ անպատասպար կիներուն:

ԳԻՏԵՒՐ ԹԵ

- **Պասպէ.** - Կրիաները կ'ապրին աշխարհին բարեխառն եւ տաք շրջաններուն մէջ:
- **Կերակուր.** - Կրիաները, ըստ իրենց տեսակին, թէ՛ բուսակեր եւ թէ՛ մսակեր են:
- **Երկայնք.** - Կրիաներուն երկայնքը կրնայ տարուերիլ 10 սմ.էն մինչեւ 2 մետր:
- **Տարիք.** - Կրիան ամէնէն երկար ապրող ողնաւորն է. ան կրնայ մինչեւ իսկ 150 տարի ապրիլ:

ՃԱՐԺԱՊԱՏԿԵՐ

Կրիանանեան սրահներուն մէջ արդէն իսկ ցուցադրուող մանուկներու եւ պատանիներու յատուկ «Այս էջ», «Մոնսթրըրը, ինք» եւ «Ասթերիքս է Օպելիքս. միսինն Բլէուփաթը» ծապաւէններուն վրայ աւելցած են հետաքրքրական երեք նոր ծապաւէններ՝ «Ի.-Թի.» «Սփայտըր - Աէն» եւ «Աթար ուորդ II»:

«Ի.-Թի., տը էքսթրա թերես-թերիը».- Այս ծապաւէնը վերա-

պատրաստութիւնն է 1982ի «Ի.-Թի.»-ին: Գիտաբեւեակայական այս ծապաւէնին մէջ իր ընկերներուն կողմէ երկրի վրայ մոռցուած արտերկրային էակ մը «կ'որդեգրուի» աղջնակի մը կողմէ: Անոնք շատ լաւ ընկերներ կը դառնան եւ միասին կ'ունենան արկածախնդրութիւններու շարք մը: Արդեօք արտերկրային հիւրը պիտի վերադառնայ իր աշխարհը:

REPUBLIC OF LEBANON
MINISTRY OF ENVIRONMENT

ԻՌԿԱՆԱԽՈՐՈՒԹԵԱՄԻ՝
ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵՆՍՈՒՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ


S. V. COLONY 2002

ՅԱՅՏԱԳՈՐ՝
ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ - ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ - ԽԱՂԵՐ
- ԿԱՐՁԱԿԱՆ - ՄՐՅՈՒՄՆԵՐ - ԼԵՋՈՒ ԵՒ
ԲԱԴԱՄԹԵՐԸ - ԼՈՂԱԽԱԶԱՆ


ՃԱՐԺԱԿԱՆ ՅԱՏՈՒԿ ԱՐՃԱԻ (ՊՏՈՅՏՆԵՐ):

ԻՏԵՆԻՅԵՔ ՄԵՐ ԻՏԵՍԱԳԱՅ
ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐՈՒՆ:


ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ԻՄՍԱՐ ԻՆԴԱՋԱՅՆԵԼ
09/933096 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ԵՐԵՔՇԱԲԹԻ
ԵՒ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ ԺԱՄԸ 1:30ԵՆ 6:00




1) Կրնա՞ս օգնել Պպտիկ - Մպտիկին՝ գտնելու համար սունկերուն հասցնող ճամբան:



2) Կրնա՞ս 3 ուղիղ գիծ քաշելով բաժնել սունկերը իրարու հաւասար 4 խումբերու:



3) Այս թուաբանական հաշիւը կատարէ՝ գիտնալու համար թունաւոր սունկին թիւը:



4) Կէտերը իրարու միացուր 1 - 29 գիտնալու համար, թէ Պպտիկ - Մպտիկ ի՞նչ կը փնտռէ:

1				ա	տ	ա				
2		ա	տ	ա						
3		ա	տ	ա						
4				ա	տ	ա				
5		ա	տ	ա						
6		ա	տ	ա						
7	ա	տ	ա							
8		ա	տ	ա						
9		ա	տ	ա						
10	ա	տ	ա							
11		ա	տ	ա						

(հայ կաթողիկէ Գ. հարպոյեան Ս. Ռաչ վարժարան)

5) Իւրաքանչիւր թիւի համար ունիս հոմանիշ մը, հականիշ մը կամ բացատրութիւն մը:

1. Ծոյլ:
2. Ձեռքի վարդեղէն մը:
3. Գրաւի տեղ դրուած անձ մը:
4. Բեռ փոխադրող:
5. Ջոհ:
6. հրեշտակ:
7. Ակոյ:
8. Վճիռ արձակելու վայր:
9. Լեցուն:
10. Արհեստաւոր մը:
11. Անշափահաս:

ԱՄՍՈՒԱՆ ԻՆՏՈՒՄԸ

Կրնան մասնակցիլ Յէն 12 տարեկան աշակերտները: Կտրօնը ամբողջացնելէ ետք հասցնել «ԱԶԴԱԿ»ի խմբագրատուն: Յաջորդ թիւով պիտի յայտարարուի մրցանքը շահողին անունը: Ան պիտի ստանայ նուէր մը:

ԻՆՏԱՐԱՆ ԹԻՒ 2

- 1) Ռվ է Ֆրանսայի նորընտիր նախագահը:
- 2) Ռւր ճնաճ է եւրի ճորքայէֆ:
- 3) Կրիան մինչեւ քանի՞ տարի կրնայ ապրիլ:

Անուն - Մականուն _____
 Վարժարան _____
 Ծննդեան թուական _____
 Ինքնաձայնի թիւ _____

ԻՆՏԱՐԱՆ ԹԻՒ 1Ի ԾԱԿՈՂԸ

Յարուք Ճերնէպեան (10 տարեկան, Արգարեան վարժարան) շահեցաւ անցեալ ամսուան մրցանքը: Ան իր նուէրը կրնայ ստանալ «Ավդակ»ի խմբագրատունէն, «Ճաղպոյեան» կեդրոն:

ԻՆՏԵԼՈՒԿ

- 1) Կլոր է՝ գնդակ չէ, Ջմեռ եկաւ եւ ան նորէն Ոտք չունի՝ կը քալէ: Մնաց մերկ: Ի՞նչ է: *ՏԱԹԵՒԻԿ ԱՐԹԻՆԵԱՆ Ազգ. Ռանամիրեան վարժարան*
- 2) Ես հուր մըն եմ, հսկայ հուր, Ոչ ճուխ ունիմ, Ոչ ալ մուր: *ՓՈԼԻՆ ՂԱԶԱՐԵԱՆ Ազգ. Գ. Չաթալպաշեան վրժ.*
- 3) Գարուն, ամառ Ճորեր կարեց՝ Ճուրթին երգ, *ՓՈԼԻՆ ՂԱԶԱՐԵԱՆ Ազգ. Գ. Չաթալպաշեան վրժ.*
- 4) Կը փակուին միամին, Կը բացուին միասին, Ու կը կապեն թեյ Աշխարհի լոյսին:
- 5) Իրան ունի Ճատ բարակ, Քիթը սուր է, Պոչը՝ ճակ:

:նգրող (Ծ :ԱզճՅՂ (Է :առԶ (Ծ :դմՂ (Չ :նղւսԵմսիմիԳ (Է :նղուՂոտտուԼ

Ժամանցի պատասխանները լոյս պիտի տեսնեն «Ավդակ»ի Ճարբթ, 18 Մայիս 2002ի թիւին մանկապատանեկան էջին մէջ:





ԲԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԳԻՒՍՈՒԹԻՒՆ

ԱՆՓՈՒՇ ՎԱՐԴԸ

Ժամանակին հեռաւոր երկ-
րի մը մէջ թագաւոր մը կ'ապ-
րէր: Ան ամէն բանէ աւելի ճա-
ղիկները կը սիրէր:

Օր մը թագաւորը հրամայեց
ճաղիկներու մրցում կազմա-
կերպել: Ամէնէն գեղեցիկ ճա-
ղիկ ունեցողը նուէր մը պիտի
ստանար:

Մեծ իրարանցում սկսաւ
երկրին մէջ. ամէն մարդ կը
պատրաստուէր այս մրցումին
մասնակցելու: Մարդիկ սկսան
տեսակ-տեսակ ճաղիկներ
ցանել, մշակել, խնամել:

Պատիկ գիւղի մը մէջ ճերուկ
մարդ մը, շատ-շատ կը սիրէր
ճաղիկները եւ իր ամբողջ ժա-
մանակը կը տրամադրէր պա-
նոնք խնամելու:

Այս ճերուկն ալ որոշեց
մրցումին մասնակցիլ եւ շատ
փորձերէ ու աշխատանքէ ետք,
կրցաւ իր վարդենիին վրայ ու-
նենալ գոյնագոյն, մեծ թերթե-
րով հոտաւետ վարդ մը: Այդ-
պիսի վարդ բնաւ գոյութիւն
չունէր:

Ծերուկը առաւ վարդենին,
կուրծքին սեղմեց վայն եւ
ծամբայ ելաւ դէպի թագաւորին
քաղաքը: Ամբողջ օրը քալեց՝
հոգ տանելով, ուշադրութիւն
ընելով, պաշտպանելով վայն
արեւէն եւ հովէն:

Մուտք էր արդէն, եւ տակա-
ւին շատ ծամբայ ունէր կտրե-
լիք: Որոշեց պանդոկի մը մէջ
քնանալ, սակայն պանդոկին
մէջ տեղ չգտաւ եւ ստիպուած՝
որոշեց քնանալ գոմի մը ան-
կիւնը՝ յարդերուն վրայ:

Ծերուկը խնամքով տեղաւո-
րեց վարդենին իր քով եւ
պատրաստուեցաւ քնանալու:

«Իրաւ, շատ գեղեցիկ է,
մտածեց, վստահ եմ, որ պիտի
շահիմ առաջին մրցանակը.

բայց... չեմ կրնար բռնել վար-
դը սուր փուշերուն պատճա-
ռով: Եթէ թագաւորը ուզէ բռնել
վարդը, փուշերը պիտի ճակճը-
կէին անոր մատները»:

Եւ սկսաւ սուր եւ երկար
փուշերը մէկ-մէկ հանել եւ
գրպանը դնել: Յետոյ յոգնած՝
քնացաւ:

Երբ որ արթնցաւ, վարդե-
նին չկար: Բակառակ իր
փնտռութիւններուն՝ չկրցաւ բան
մը գիտնալ վարդենիին մասին:
Ծատ նեղուած՝ ճերուկը որո-
շեց շարունակել ծամբան:

Բասաւ քաղաք եւ մրցումը
սկսաւ: Խճողումին մէջ կորսը-
ւած՝ խեղճ ճերուկը սիրտը
նեղուած դիտեց բոլոր գեղեցիկ
ճաղիկները, որոնք կը տո-
ղանցէին թագաւորին առջե-
ւէն...: Ծուշաններ, կակաչներ,
մարգարտաճաղիկներ, մե-
խակներ, վարդեր...:

Յանկարծ պատիկ տղու մը
ձեռքը տեսաւ իր վարդը:

Տղան անհոգ մօտեցաւ թա-
գաւորին: Բոլորը հիացած կը
դիտէին: Թագաւորը ճոռեցաւ
հոտուրտալու համար:

– Այս ճաղիկը հրաշալի է, –
ըսաւ թագաւորը, – ես երբեք
այսքան գեղեցիկ վարդ չեմ
տեսած, դժուար մշակեցիր այս
վարդը:

– Այո՛, տէր իմ, – ստեց
տղան:

Այն ատեն ճերուկը չկրցաւ
ինքզինքը վսպել, ձեռով մը
դուրս ելաւ խճողուած բազմու-
թեան մէջէն եւ վազելով եկաւ
ու կեցաւ թագաւորին առջեւ:

– Տէ՛ր իմ, այս տղան սուտ
կը խօսի: Այս վարդը իմս է,
երէկ գիշեր մէկը գողցաւ
վարդս:

– Որքան հաւատալ, – մտա-
ծեց թագաւորը:



– Ի՞նչպէս քեզի հաւատամ,
փաստ ունի՞ս, – հարցուց թա-
գաւորը:

– Նայեցէք, տէր իմ, նայե-
ցէ՛ք, կոթին վրայ բան մը չէ՞ք
նշմարեր...:

– Այո՛, – ըսաւ թագաւորը, –
այս վարդը փուշեր չունի եւ
տարօրինակ է... Ի՞նչ կ'ըսես,
պատիկ տղայ՝...:

Յանցաւոր տղան չկրցաւ
բան մը ըսել, ապշեցաւ, շուա-
րեցաւ...:

– Այսպէս է, այս վարդը եր-
բեք փուշ չունի... – կրկին
ստեց տղեկը:

– Բապա ասո՞նք, – ըսաւ
յաղթական ճերուկը՝ փուշերը
գրպանէն դուրս հանելով եւ
բոլորին ներկայութեան սկսաւ
փուշերը մէկ – մէկ տեղերը
դնել եւ պատմեց, թէ գիշերը
ինչ պատահեցաւ:

Թագաւորը շատ բարկացաւ:
Պատահածը լսելով՝ եւ հրա-
մայեց բանտարկել տղան պա-
տանիներու յատուկ բանտի մը
մէջ, ուր ան պիտի սորվէր
ճշմարտախօս եւ ակնիւ ըլլալ:
Իսկ ճերուկ մարդը դարձաւ
թագաւորին պարտիպանը եւ
ստացաւ քսակ մը ոսկի: □

ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐԷՆ

Բաւը կ'ըկալով դուրս ելաւ բոյնէն.

– Կա – չա – չա – չա, հաւկիթ մը ածեցի:

– Կա – չա – չա – չա, հաւկիթ մը ածեցի:

– Կու – կու – լիկ – կու, – թեւերը թափահարեց արորդ: –

Բաւիկս մեծ հաւկիթ մը ածեց...

– Բաու – Բաու – Բաու, – հաջեց շունը, – Բաւիկը ոսկիէ
հաւկիթ մը ածեր է...

– Աղո՛ւ – լո՛ւ – լո՛ւ – լո՛ւ – դո՛ւ – լո՛ւ – լո՛ւ, – աղմկեց
հնդկահաւը, – Բաւիկը ձմերուկի չափ հաւկիթ մը ածեր է...:

Կատուն լսեց, սուս ու փուս հաւնոց մտաւ, սուսիկ – փու-
սիկ հաւկիթը լափեց, պեխերը սուսիկ – փուսիկ լիզելով՝ դուրս
եկաւ բակ եւ.

– Միա՞ն, հաւիկը ստախօսին մէկն է, ոչ մէկ հաւկիթ ալ չէ
ածեր:



ՄԱՅՐԻԿ

Մայրիկ այնքան գեղեցիկ էս, որ եթէ քեզ երկինք բարձրացնէինք, ամբողջ երկինքը պիտի փայլէր: Եթէ ճաղիկ մը ըլլայիր, ամէնէն դըժար գտնուող ճաղիկը պիտի ըլլայիր: Մայրիկ, եթէ դուն չըլլայիր, իմ կեանքիս նպատակը պիտի չգտնէի:

Անուշիկ մայրիկ, ես բոյս մըն եմ, իսկ դուն՝ արեւն ու ջուրը: Առանց քեզի աշխարհը մութ կ'ըլլար: Եթէ դուն չիս չպաշտպանէիր քու տաքուկ ձեռքերուդ մէջ, ես չէի ապրեր: Առանց քեզի կեանքը իմաստ չունի: Երբ աչքերուս մէջ նայիս, կը վզամ՝ որքան չիս կը սիրես: Դուն իմ ամէնէն մտերիմ բարեկամս ես, մայրիկ, ամէնէն գեղեցիկը, հասկցողը, օգնութեան հասնողը:

Երախտապարտ եմ քեզի եւ շատ հպարտ եմ, որ քեզի պէս մայրիկի մը արժանացած եմ: Միշտ ուրախ ապրիս դուն՝ մայրիկ, եւ քու ջուրդ իմ վրայէս թող չպակսի:

ԳԱՐՄԵՆ ՊԱՆԵԱՆ

Ձ. դասարան

Մեյանքթոն եւ հայկ Արսլանեան ճեմարան



ԵՂԻԱ ԹԱՃՃԵԱՆ Ձ. դասարան, Ազգ. Գեորգ Զաթապալջեան վրձ.



ՍԱԳՕ ԴԱԽԻԹ - Դ. դասարան, Ազգ. Աբտր Գասարճեան վարժարան

ԴԱՅՐԵՆԱՍԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԸ ԱՆԿԱՌՈՒԹԻՒՆԸ

28 Մայիս, 1918ը ինձի համար շատ գեղեցիկ օր մըն է, որովհետեւ 24 Ապրիլ 1915ին ջարդէն ետք հայերը անկախութիւն առին եւ թուրքերը վարձաւան, որովհետեւ իրենք ուզած էին, որ մէկ հայ ձգեն թանգարանին մէջ իբրեւ նմուշ, բայց երեք տարի ետք հայերը վորանալով կերտեցին անկախութիւն:

Մայիս 28ը ինձի համար գեղեցիկ օր մըն է եւ ես ալ կ'ուզեմ Արամ Մանուկեանի եւ հայ ֆետայիներուն պէս ընել՝ հայրենիքս փրկել բարբարոս թուրքերուն ձեռքէն:

Մենք ունեցած ենք շատ ֆետայիներ, որոնք կռուած են եւ յաղթական դուրս եկած են: Ես շնորհակալութիւն կը յայտնեմ անոնց, որոնք կռուած են հայրենիքիս պատագրման համար: Մենք մեր հայրենիքը պիտի ապատենք: Արարատ լեռը պիտի ապատենք եւ մեր երազը պիտի իրականացնենք: Եռագոյն դրօշակը օր մը անպայման պիտի ծածանի Արարատ լեռան գագաթին եւ այն ատեն մենք բարձրաձայն պիտի պոռանք ամբողջ աշխարհին, որ մենք տակաւին կանք, պիտի ըլլանք եւ շատնանք: Թուրքին երեսին պիտի պոռանք ու ըսենք, որ իր երազը չիրականացաւ, այլ մենք՝ հայերս տակաւին կը պահենք մեր լեզուն, մշակոյթն ու ամբողջ ազգը, ինչպէս նաեւ մեր կրօնքը՝ քրիստոնէութիւնը:

ԱՐԻՆ ՄԵՐԱՅՏԱՐԵԱՆ

Ձ. դասարան

Ազգային Սուրէն Խանամիրեան Քոլէճ



ՆԱՄԱԿԱՆԻ

Սիրելի «ՊՁՏԻԿ - ՄՁՏԻԿ»ի բարեկամներ, մեծ ուրախութեամբ ստացայ եւ կարդացի ձեր բոլոր նամակները:

Դժբախտաբար էջերս սահմանափակ ըլլալով, չկրցայ վանոնք արտատպել:

Սակայն միշտ մեծ հաճոյքով պիտի կարդամ ձեր գրութիւնները եւ պիտի փորձեմ ընդառաջել ձեր փափաքներուն:

«ՊՁՏԻԿ - ՄՁՏԻԿ»

3. 9. Սիրելի Սահակ Փայլեան, կ'ուզէիր ճանօթանալ մեր խմբագրական կազմին...



«Պպտիկ-Մպտիկ»ի խմբագրական կազմը լուրջ աշխատանքներու լծուած

«Պպտիկ-Մպտիկ»ը ստացաւ նամակներ եւ ե-նամակներ հետեւեալ անձերէն.

Թալին Բուրճեան, Թամար Զոլաքեան, Գեորգ Ապաճեան, Դրօ Էթոյեան, Մարալ Քիլահճեան - Պաղտասարեան, Նանոր Փոլատեան, Յոլեր Գեորգ Գասապեան, Ծողեր Զգուշեան, Բենօ Միշոյեան:

Ձեր գրութիւնները կամ նամակները կրնաք ուղարկել՝ bozdlg_mozdlg@hotmail.com կամ յանձնել՝ «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»ի խմբագրութեան, «ԱՋՊԱԿ» «Ճաղկոյեան» կեդրոն